# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
# «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը շարունակել է ակտիվորեն համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության տարբեր ինստիտուտների, այդ թվում՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի և ՄԱԿ Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների հետ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2006թ. դեկտեմբերի 13-ին:

Արձանագրության վավերացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կկատարի ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում ստանձնած հանձնառությունը:

Վավերացնելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը՝ Հայաստանը կստանձնի պարտավորություն ընդունել անհատական հաղորդումներ (կոմունիկացիաներ)՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների խախտումների վերաբերյալ: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին:

Արձանագրության վավերացումը թույլ կտա էլ ավելի ամրապնդել Հայաստանի ու ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի ու ՄԱԿ մարդու իրավունքների պայմանագրային մարմինների, մասնավորապես՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ կոմիտեի հետ փոխգործակցությունը՝ էլ ավելի բարձրացնելով մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2006թ. դեկտեմբերի 13-ին ստորագրված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ** **Արտակ Ապիտոնյան**